ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ժամանակակից քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրները / միգրացիա, թրաֆիքինգ, կոռուպցիա/

ԱՌԱՐԿԱ՝ Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Ծովինար Հայկի Սարգսյան

ՄԱՐԶ՝ Վայոց ձոր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Մալիշկայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. Կարապետյան

Բովանդակություն

Ներածություն----------2

Ժամանակակից քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրները

Գլուխ 1. ՄԻԳՐԱՑԻԱ

1.1 Տեսակները ըստ տևողության և ձևի ----------5

1.2 Միգրացիայի տեսակները ըստ դրդապատճառների --------8

1.3 Միգրացիան Հայաստանում----------9

Գլուխ 2. ԹՐԱՖԻՔԻՆԳ

2.1 Թրաֆիքինգի տեսակները ----------10

2.2 Իրավիճակ՝ թրաֆիքինգը Հայաստանում ----------12

Գլուխ 3. ԿՈՌՈՒՊՑԻԱ

3.1 Կոռուպցիայի ձևերն ու եղանակները ----------15

3.2 Կոռուպցիան Հայաստանում ----------17

Հետազոտության արդյունքների վերլուծություն ------19

Եզրակացություն ----------19

Գրականության ցանկ ----------23

– – –

Ինչպես այլազգի մի իմաստասեր
Մահն համարում է մեծագույն չարիք,
Եթե իսկապես իմաստավորված , գիտակցված չէ այն
Ես էլ իմ խոսքով նույնն եմ հաստատում .
Քանզի անզգա ու պաճարամիտ անասունի պես ,
Մեռնում ենք իզուր ու չենք զարհուրում ,
Կորչում ենք `ու չենք սոսկում ապշահար ,
Չենք երկյուղում , երբ հողն ենք իջնելու ,
Տարագրվում ենք ու չենք տագնապում ,
Եղծվում ենք ու չենք տրտնջում բնավ ,
Մաշվում ենք ու չենք մտածում նույնիսկ ,
Հատնում ենք անհոգ, անփույթ , անտարբեր ,
Գնում ենք անդարձ ու չենք սթափվում ,
Գերևարվում ու չենք էլ զգում այդ:

. /Գ. Նարեկացի , Մատյան ողբերգություն/

Ներածություն

Թեմայի արդիականությունը -- 21-րդ դարում գոյություն ունեն մի շարք խնդիրներ , որոնք ընդհանուր են ողջ մարդկության համար և վերաբերում են մարդու կյանքի բնականոն ընթացքի ապահովմանը : Ներկայումս երկրագնդի մի կետում կատարվող իրադարձությունները կարող են ազդել մնացած այլ կետերում ապրող մարդկանց վրա : Այդ հանգամանքը նկատի ունենալով ` մտածողները նախորդ դարի վերջերից

լայն սկսեցին խոսել համամարդկային հիմնախնդիրների առաջացման մասին. Հիմնախնդիրներ , որոնք սկիզբ առնելով երկրագնդի որևէ կոնկրետ վայրում ,

այնուամենայնիվ , այնքան ազդեցիկ են ու կարևոր , որ հավասարապես վերաբերում և մտահոգում են ողջ մարդկությանը : Այդ խնդիրներից կարևորներն են

- մեր մոլորակի բնակչության ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխությունը ,
- շրջակա միջավայրի աղտոտումը ,
- միջազգային ահաբեկչության ,
- թրաֆիքինգի ,
- թմրամոլության ,
- կիբերհանցագործության տարածումը:

Մեր օրերում դրանց ավելացել է նաև տարբեր պատճառներով առաջացած միգրացիոն ճգնաժամը կամ այսպես կոչված փախստականների ալիքը:

Այսպիսի խնդիրներն անվանում են գլոբալ հիմնախնդիրներ : Նման խնդիրների լուծումը հնարավոր է միայն բոլոր երկրների /ինչպես զարգացած և հարուստ , այնպես էլ թույլ զարգացած և աղքատ / համատեղ և նպատակասլաց ջանքերի շնորհիվ :

Գլոբալ խնդիրների օրինաչափ արդյունք են հիմնականում գիտատեխնիկական և տնտեսական առաջընթացի շեշտակի արագացման, մարդու վերափոխիչ գործունեության ընդլայնման և որակական փոփոխության, սոցիալական հակասությունների խորացման: Գլոբալ խնդիրների կարևորության համընդհանուր գիտակցումը ենթադրում է համապատասխան փիլիսոփայական իմաստավորում, մասնավորապես մարդկության միասնության, մարդու պատասխանատվության, բնության հետ հասարակության ներդաշնակության անհրաժեշտության ըմբռնում:

Դրանց լուծումը պահանջում է փոխադարձ վստահության և ըմբռնման վրա հիմնված միջպետական փոխհարաբերությունների նոր տիպ: Սոցիալական տարբեր

կառուցվածքի երկրների համագործակցությունը հանուն գլոբալ խնդիրների լուծման չի վերացնում սկզբունքային աշխարհայացքային տարաձայնությունները։

Մարքսիզմը գլոբալ խնդիրները դիտում է ամենից առաջ կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանակներում, առանձնացնում սոցիալ-քաղաքական, տնտեսագիտական, գիտատեխնիկական, միջազգային-իրավական, էկոլոգիական և բարոյական կողմերը։

Բուրժուական տեսություններին («Հռոմի ակումբ») ընդհանուր առմամբ հատուկ է հոռետեսությունը և ուտոպիականությունը, գլոբալ խնդիրների գոյացման և լուծման մեջ՝ սոցիալական գործոնների թերագնահատումը, տեխնոկրատական կամ մարդաբանական ծայրահեղությունները։

Իրականում գլոբալ խնդիրների վերջնական լուծումը պահանջում է ոչ միայն գիտատեխենիկական նախադրյալներ, այլև արմատական սոցիալ-քաղաքական փոփոխություններ։

Գլոբալացվող արդի հասարակությունում համընհանուր են դառնում ոչ միայն մարդկության առաջընթացի արդյունքները , այլև մարդկային հանրության առջև ծառացած խնդիրները : Գլոբալացումն իր հետ բերում է նաև կազմակերպված հանցավորության աճ , քանի որ հանցավոր խմբերը երկրների միջև տնտեսական , քաղաքական ,մշակութային և այլ կապերի սերտացումը օգտագործում են իրենց նպատակներին հասնելու համար : Դրան նպաստում են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները :

Հարց է ծագում . Ինչ անել : Պատասխանը հետևյալն է . պետք չէ վախենալ գլոբալացումից և հակադրվել դրան , քանի որ այն անխուսափելի գործընթաց է : Ավելի ճիշտ կլինի ուսումնասիրել դրա հետևանքները , որպեսզի կարողանանք ուժեղացնել դրական ազդեցությունները և չեզոքացնել կամ հակազդել բացասականներին ՝ պահպանելով մեր հայկականությունն ու մեզ բնորոշ յուրակերպությունները :

1.1 ՄԻԳՐԱՑԻԱ-

Տեսակները, ձևերը: Միգրացիայի աշխարհագրություն --Վերջին հարյուրամյակի

ընթացքում մեր մոլորակի ժողովրդագրական իրավիճակը զգալի փոփոխությունների է ենթարկվել : Աշխարհի երկրներում միջին հաշվով 10 անգամ ավելացել է քաղաքային բնակչությունը : Երկու անգամ ավելացել է մարդկանց կյանքի միջին տևողությունը ՝ զարգացած երկրներում անցնելով 80 տարուց : Ծնելիության ոլորտում առաջացան 2 միտումներ. զարգացած երկրներում այն արձանագրում է հարաճուն անկում , իսկ զարգացող երկրներում , ընդհակառակը՝ ավելացող աճ : Դա հանգեցնում է աշխարհի երկրների բնակչության կազմում զգալի փոփոխությունների :
Զարգացած երկրներում բնակչությունը ընդհանուր առմամբ <<ծերանում է>> , այսինքն ՝ նրա կազմում ավելանում է մեծահասակների թիվը , իսկ թույլ զարգացած երկրներում կտրուկ ավելանում է երիտասարդների թիվը : Քանի որ աշխարհի բնակչության բացարձակ մեծամասնությունը բնակվում է Աֆրիկայի , Հարավային ու կենտրոնական Ամերիկայի թույլ զարգացած երկրներում , ապա տեղի է ունենում մոլորակի ընդհանուր բնակչության արագացող աճ : Այն հասնում է միջինը օրական 250 հազարի :
Վերը նշված ժողովրդագարական փոփոխությունները հանգեցնում են միգրացիոն հոսքերի ուղվածության փոփոխմանը :

Յուրաքանչյուր երկրի բնակչության թվաքանակը փոխվում է ոչ միայն բնական շարժի (սերնդափոխություն), այլև մեխանիկական շարժի՝ միգրացիայի (գաղթերի) շնորհիվ: Միգրացիան բնակչության բռնի կամ կամավոր տեղաշարժն է մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ: Տարբերում ենք արտաքին (միջմայցամաքային և միջպետական) և ներքին (ներպետական) միգրացիաներ, միջշրջանային և գյուղական բնակավայրերից բնակչության վերաբնակեցումը քաղաքներում:

Արտագաղթողների և ներգաղթողների գումարն արտահայտում է միգրացիայի ընդհանուր, իսկ տարբերությունը՝ զուտ մեծությունը: Միգրացիաները կարևոր դեր են կատարել մարդկության պատմության մեջ. նրանց հետ են կապված բնակեցման, հողի տնտեսական յուրացման, արտադրողական ուժերի զարգացման, ռասաների, ժողովուրդների ու լեզուների կազմավորման և աշխարհով մեկ տարածման գործընթացները:

Նկարը խորհրդանշում է աշխարհի տարբեր երկրներ միգրանտների հոսքը:

Աշխարհագրության մի ճյուղը՝ **միգրացիայի աշխարհագրությունը,** ուսումնասիրում է միգրացիոն հոսքն առանձին տարածքների (երկրների, շրջանների) և բնակավայրերի տարբեր տիպերի, այդ հոսքերի կառուցվածքի միջև, ինչպես նաև նրա պատճառները, գործոնները և մոտիվները (շարժառիթները):

Ինչպես գիտենք, ներկայումս հազարավոր միգրանտներ են գալիս Հայաստան արտագաղթում Հայաստանից, հետևաբար՝ միգրացիայի աշխարհագրության շնորհիվ կարելի է ևս մեկ անգամ համոզվել, որ աշխարհագրությունը վերաբերում է իրական կյանքի խնդիրներին և օգնում հաղթահարել դրանք:

Միգրացիան լինում է **կամավոր և բռնի**: Եթե անձի միգրացիա կատարելու որոշումը կայացվել է ինքնակամ, առանց արտաքին գործոնների պարտադրանքի, ապա միգրացիան կամավոր է, եթե որոշումն ընդունվել է արտաքին գործոնների (բնական հասարակական) ճնշման ներքո՝ այդպիսի միգրացիան բռնի է (դեպորտացիա):
Միգրացիայի գլխավոր **պատճառը** սոցիալ - տնտեսական է (աղքատություն, գործազրկություն և այլն): Միգրացիա կարող է տեղի ունենալ նաև քաղաքական, ընտանեկան-կենցաղային, կրոնական, ազգային, էկոլոգիական և այլ պատճառներով:

Ըստ տարածքի ընդգրկման՝ միգրացիաները լինում են **արտաքին և ներքին**:
արտաքին միգրացիաներ են **արտագաղթը (էմիգրացիան) և ներգաղթը (իմիգրացիան):**

Նկարում ներկայացված են միգրացիաների տեսակները ըստ տևողության, կազմակերպման եղանակների և ձևերի:

Միգրացիայի տեսակները ըստ տևողության, կազմակերպման եղանակի և ձևի



Էմիգրացիան քաղաքացիների մեկնումն է սեփական երկրից, իսկ իմիգրացիան՝ այլ երկրի քաղաքացիների մուտքը տվյալ երկիր: Արտաքին միգրացիաներ դիտվել են մարդկության պատմության ողջ ընթացքում (օր՝ «ժողովուրդների մեծ գաղթը»): Ամերիկա, Ավստրալիա աշխարհամասերի հիմնական բնակչությունը Եվրոպայից ներգաղթածների սերունդներն են (միայն 19-րդ դարում մոտ 60 մլն մարդ է միգրացիա կատարել):

1.2 Միգրացիաների դրդապատճառները (շարժառիթները, մոտիվները)

Միգրացիայի տեսակներն ըստ դրդապատճառների



Կրոնական շարժառիթով զանգվածային գաղթեր են տեղի ունեցել 1947 թ.-ին Հնդկաստանում, երբ մահմեդականներն առանձնացան Պակիստանում, իսկ Պակիստանից միլիոնավոր հնդուականներ և բուդդայականներ տեղափոխվեցին Հնդկաստան:
Քաղաքական և ազգային միգրացիայի օրինակ է Ադրբեջանից մոտ **400 000** հայերի հարկադրված գաղթը (դեպորտացիան) (իրականում փախուստը կյանքը փրկելու նպատակով) ՀՀ և այլ երկրներ: Վերջին 20 տարվա ընթացում ՀՀ-ից արտագաղթել է մոտ 1 **մլն մարդ՝** հիմնականում սոցիալ-տնտեսական շարժառիթով:



Ներքին միգրացիան տեղի է ունենում հիմնականում չորս ուղղությամբ՝ գյուղից քաղաք, քաղաքից գյուղ, գյուղից գյուղ, փոքր քաղաքից մեծ քաղաք: Բազմաթիվ երկրներում ներքին միգրացիաներ կատարվում են նախկինում յուրացված և խիտ բնակեցված շրջաններից դեպի նոր յուրացվող շրջաններ:

1.3 Միգրացիան Հայաստանում

Միգրացիան Հայաստանում իր թափը չի կորցնում արդեն 25 տարի: Որպես հիմնական պատճառներ, մեկնողները նշում են Հայաստանում զարգացման հեռանկարների բացակայությունը, բիզնեսով զբաղվելու խոչընդոտները, անցանկալի բարոյահոգեբանական մթնոլորտը եւ անկայուն աշխարհաքաղաքական վիճակը: Բացառությամբ 2004-2006թթ., Հայաստանը անկախության տարիներին ունեցել է միգրացիայի բացասական սալդո, այսինքն՝ մեկնողների թիվը գերազանցել է ժամանողների թվին: Կառավարությունն ընդունում է, որ Հայաստանի ժողովրդագրական պատկերը փոխվում է առաջին հերթին միգրացիայի արդյունքում:

ՄԱԿ-ի տվյալների հիման վրա՝ ամերիկյան «Փյու հետազոտական կենտրոնը» եզրակացնում է, որ Հայաստանում ծնվածների 25%-ը՝ մոտ 937 հազար մարդ, 2015թ. ապրել է Հայաստանի սահմաններից դուրս: Այս ցուցանիշով Հայաստանը աշխարհում 4-րդ տեղում է՝ Բոսնիա եւ Հերցեգովինայից, Ալբանիայից եւ Ջամայկայից հետո: Հայաստանից մեկնած միգրանտների գերակշռող մասը՝ մոտ 56%-ը, հանգրվանել է Ռուսաստանի Դաշնությունում: Եվրոպական երկրներին բաժին է ընկնում միգրանտների մոտ 15%-ը, ԱՄՆ-ին եւ Կանադային՝ 9.5%-ը, իսկ 19.5%-ը բաժին է ընկել այլ երկրներին: Արտագաղթի միտումները նշված ուղղություններով առկա է նաեւ Հայաստանի երիտասարդ սերնդի մոտ, որոնց շրջանում կատարված հարցումների համաձայն՝ շուրջ 27%-ը հակված է ներքին միգրացիայի, իսկ 30%-ը պատրաստվում է ընդհանրապես լքել Հայաստանը: Նման որոշում կայացնելու համար երիտասարդները նշում են հիմնական 3 պատճառ՝ կյանքի որակը բարձրացնելու ցանկություն, աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորություն, ավելի լավ կրթություն ստանալու ցանկություն: Պոտենցիալ միգրանտների մեծ մասը՝ 36.3%-ը, նախընտրում է տեղափոխվել Ռուսաստան: Ցանկալի ուղղություններն են նաեւ ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան: Արտագաղթել ցանկացողները նշում են հիմնականում այն երկրները, որտեղ կա ձևավորված հայկական համայնք: Միգրացիոն հոսքերի վրա դեռևս մեծ ազդեցություն չի ունենում Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամակցելը եւ դրա շրջանակներում աշխատանքային միգրացիան կարգավորող միջազգային համաձայնագրերի մշակման գործընթացը:

ԵԱՏՄ նախատեսում է միասնական աշխատանքային շուկայի ստեղծում, ինչի համար մտադիր է հասնել Միության

տարածքում ներքին փաստաթղթերի օգտագործմանը: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հրապարակված զեկույցի համաձայն՝ 2015թ. Բելառուսում Հայաստանից մեկնած աշխատանքային միգրանտների թիվը կազմել է ընդամենը 383 մարդ, ինչը սակայն 220–ով ավել էր 2014թ. ցուցանիշներից: Մինչդեռ Ռուսաստանի դեպքում, թեպետ այդ նույն ցուցանիշը նվազել է 2.3 անգամ, բայց անգամ այս դեպքում թիվը բավական մտահոգիչ է՝ շուրջ 125.000 մարդ:

Գլուխ 2. Թրաֆիքինգ

2.1 Թրաֆիքինգի տեսակները

- **Թրաֆիքինգը**, մարդկանց՝ ստրկական, սեռական, բռնի և չնչին վարձատրությամբ աշխատանքի տեսքով անօրինական շահագործումն է:

Մարդու թրաֆիքինգը և շահագործումը համարվում է 21-րդ դարի ստրկություն , այն հաճախ անվանում են նաև <<մերօրյա կամ արդի ստրկություն >>: Այն ծանր, անդրսահմանային, կազմակերպված հանցագործություն է և նույնչափ շահութաբեր է, ինչ թմրամիջոցների և զենքի ապօրինի վաճառքը: Անձանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխարգելելու, զսպելու և պատժելու մասին արձանագրությունը ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության կողմից 2000 թ., Իտալիայի Պալերմո քաղաքում և այն ՄԱԿ-ի՝ «Անդրազգային կազմակերպված հանցագործությունների դեմ» կոնվենցիայի մաս կազմող միջազգային համաձայնագիր է: Թրաֆիքինգի մասին արձանագրությունն այդ կոնվենցիայում հավելված երեք արձանագրություններից մեկն է:

Այս արձանագրությունն ավելի քան կես դարվա մեջ առաջին գլոբալ օրինական փաստաթուղթն էր թրաֆիքինգի դեմ: Այն նաև հանդիսանում է թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության փաստաթուղթ , որտեղ նշվում է , որ թրաֆիքինգը բաղկացած է 3 հիմնական տարրերից ՝ գործողություններ ,միջոցներ և նպատակ :

Արձանագրությունը տալիս է հետևյալ սահմանումները.

1. Մարդկանց առևտուր է համարվում շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը բռնի ուժով կամ առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով: Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց՝ մարմնավաճառության մեջ ներքաշումը կամ սեռական շահագործման այլ ձևերը,

2. Հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը
3. մարդկանց առևտրի զոհի համաձայնությունը այնպիսի շահագործմանը, որի մասին խոսվում է հոդվածի (1) կետում, հաշվի չի առնվում, եթե օգտագործվել է (1) կետում նշված ներգործություններից որևէ մեկը,
4. շահագործման նպատակով երեխա հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը համարվում է մարդկանց առևտուր, նույնիսկ այն դեպքում, եթե դրանք կապված չեն (1) ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկի կիրառման հետ:

Թրաֆիքինգի մասին արձանագրությունն օրինականացվել է և ուժի մեջ է 2003 թ. դեկտեմբերի 25-ից: : Թրաֆիքինգը շահութաբեր արտադրություն է: Համարվում է ամենաարագ աճող հանցավոր բիզնեսն աշխարհում: Թմրավաճառքին հաջորդելով՝ համարվում է երկրորդ ամենաշահաբեր հանցավոր բիզնեսը: 2004թվականին ամբողջ աշխարհում թրաֆիքինգից ստացած տարեկան եկամուտը գնահատվել է 5-9 միլիարդ ամերիկյան դոլլար: 2005 թ. Պատրիկ Բելսերը տարեկան շահույթը գնահատել է 31.6 միլիարդ ամերիկյան դոլլար:
Ըստ 2008 թվականի ՄԱԿ-ի գնահատականների՝ մոտավորապես 2.5 միլիոն մարդ՝ 137 երկրներից ենթարկվում են թրաֆիքինգի 127 երկրներում: Սակայն այս տվյալները չեն կարող հստակ լինել, դրանք միայն գնահատականներ են և կարող են անընդհատ փոփոխվել, քանի որ թրաֆիքինգը շարունակաբար կատարվող գործողություն է և ոչ թե որոշակի ակտ:
Մարդկանց թրաֆիքինգը տարբերվում է մարդկանց մաքսանենգությունից: Վերջինում մարդիկ կամավոր են դիմում մաքսանենգների՝ իրենց գաղտնի, անօրինական ձևով մի վայրից մյուսը տեղափոխելու համար: Այստեղ անօրինական փաստաթղթերի մեջ խարդախություններ, սխալ տվյալներ կարող են նաև չլինել, իսկ ժամանումից հետո մաքսանենգված անձը կարող է ինքն ընտրել իր ճանապարհը:
Մինչդեռ թրաֆիքինգի զոհերին թույլ չի տրվում ժամանումից հետո հասնել իրենց նպատակային վայրը, նրանք իրենց կամքից անկախ, բռնի պահվում են և կատարում հարկադրական աշխատանք: Վերջինիս բնույթը նկարագրված է Թրաֆիքինգի մասին արձանագրության (1) կետում, և շատ հաճախ զոհերը ընդհանրապես վարձատրություն չեն ստանում, կամ ստանում են շատ չնչին գումար՝ կատարած աշխատանքի դիմաց:
Թրաֆիքինգի զոհ դարձած մարդը հարկադրված այսպիսի աշխատանք կատարում է մի քանի «ոլորտներում».

- աշխատանք պարտքի դիմաց, օրինակ՝ որպես վճար՝ որևէ երկիր իրեն տեղափոխելու համար,
- աշխատանք բռնի ուժով, այսինքն, երբ ուղղակիորեն տնօրինում են մարդուն,
- սեռական բռնություն, ովքեր հիմնականում ծառայում են հենց թրաֆիքինգի

կազմակերպիչներին: Զոհերը հիմնականում դեռահասներ, որբեր կամ պատանիներ են, կարող են լինել և՛ կանայք, և՛ տղամարդիկ, ովքեր ավելի խոցելի են. գտնվում են հոգեպես կամ ֆինանսապես ծանր վիճակում,

- անչափահասների աշխատանք, երեխաներին հասցնում է ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և բարոյական մեծ վնասներ, զրկում է կրթությունից, զարգացումից և ընտանիք ունենալուց:

Ճիշտ է, բուն թրաֆիքինգի համար մի վայրից մյուսը գնալն անհրաժեշտ պայման չէ, բայց զոհերի համար «աշխատատեղեր» գտնող հանցագործները սփռված են տարբեր երկրներում և ճանապարհորդում են նշված նպատակով: Խարդախությամբ, խաբեությամբ նրանք աշխատանքի են տեղավորում զոհերին, ովքեր շատ ավելի ուշ են տեղեկանում իրենց իրական աշխատանքի բնույթի և իրական աշխատավարձի չափի մասին:

SS զարգացմանը զուգահեռ հանցավոր աշխարհը նույպես տեղափոխվել է վիրտուալ աշխարհ և համացանցը դարձել է այն միջավայրը , որտեղ հնարավոր է կատարել գրեթե ցանկացած հանցագործություն ՝ առավելագույնս պահպանելով անանունությունը : Թրաֆիքինգ իրականացնողները կարող են կապ հաստատել զոհի հետ ցանկացած եղանակով , ներառյալ համացանցի միջոցով , գործունեության տարբեր ոլորտներում , օրինակ՝ աշխատանքի տեղավորման , ամուսնական գործակալությունների անձնական շփման և այլն :

Բացի այդ համացանցը դարձել է հասանելի ազգաբնակչության լայն շերտերին առավել ևս ՔՈՎԻԴ 19-ով պայմանավորված համավարակի պայմաններում , երբ ուսուցումը թե դպրոցներում ու ԲՈՒՀ-երում , թե աշխատանքային հանդիպումներն ու քննարկումները տեղափոխվեցին համացանց և ակամա հարկադրեցին անձանց բացել օգտահաշիվներ տարբեր սոցիալական ցանցերում :

2.2 Իրավիճակ-Թրաֆիքինգը Հայաստանում -Համաձայն ՄԱԿ-ի տվյալների, թրաֆիքինգի զոհերը հիմնականում չզարգացած կամ զարգացող երկրներից են, որոնց շահագործումը տեղի է ունենում զարգացած երկրներում: Սա թրաֆիքինգի հիմնական միտումն է: Այնուամենայնիվ, հանդիպում են նաև ներքին թրաֆիքինգի դեպքեր, երբ զոհը թրաֆիքինգի է ենթարկվում իր իսկ երկրում: Թրաֆիքինգի առավել տարածված ձևերն են սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը, մարդկանց առք ու վաճառքը, օրգանների կորզումը: Տղամարդկանց շրջանում առավել տարածված է հարկադիր աշխատանքի (85.7%), իսկ կանանց շրջաում՝ սեռական շահագործման թրաֆիքինգը (72%): Կանայք առավել հաճախ են թրաֆիքինգի զոհ դառնում (51%), թեպետ ՄԱԿ-ի վիճակագրության համաձայն, վերջին տարիներին նկատվում է նաև տղամարդկանց (21%) և երեխաների (28%) շրջանում թրաֆիքինգից տուժածների աճ:

Թրաֆիքինգի ենթարկվածների հստակ թիվը դեռևս սահմանված չէ, քանի որ այն հաշվարկելը մեթոդաբանական դժվարություններ է առաջացնում: Այնուամենայնիվ, Աշխատանքի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հաշվարկել է ժամանակակից ստրկության մեջ գտնվող անձանց մոտավոր թիվը, որի մեջ ներառված են նաև թրաֆիքինգից տուժածները: Ըստ այդ տվյալների, 2016թ. աշխարհում 40.3 միլիոն մարդ տուժել է ժամանակակից ստրկությունից: Նրանցից 16 միլիոնը ենթարկվել է աշխատանքային շահագործման, 4.8 միլիոնը՝ սեռական շահագործման, իսկ 15.4 միլիոնը՝ հարկադրաբար ամուսնության: Ամեն 4 զոհից մեկը երեխա է: Ժամանակակից ստրկության մակարդակը ամենաբարձրը Աֆրիկայում (7.6%) և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում է (6.1%): Սրան զուգահեռ ԱՄՆ պետքարտուղարությունն ամեն տարի հրապարակում է «Ձեկույց մարդկանց

թրաֆիքինգի վերաբերյալ»: Ըստ զեկույցի, 2016թ. թրաֆիքինգի բացահայտված դեպքերի արդյունքում զոհերի թիվը կազմել է 66520 մարդ: ԱՀԿ-ը նաև հաշվարկել է, որ հարկադիր աշխատանքի արդյունքում ամեն տարի գոյանում է մոտ 150 մլրդ դոլար անօրինական եկամուտ, որի մեծ մասը՝ 99 միլիարդը՝ հարկադիր սեռական շահագործումից:

Հայաստանը, ինչպես աշխարհի ցանկացած երկիր, ապահովագրված չէ թրաֆիքինգից: Սա անդրազգային կազմակերպված հանցավորության ձև է: Ամեն տարի հազարավոր մարդիկ են դառնում թրաֆիքինգի զոհ թե՛ սեփական երկրում, թե՛ երկրի սահմաններից դուրս: Հայաստանում թերևս վիճակագրությունը նույնն է. զոհերի շարքում կանանց թիվն ավելի մեծ է: Ըստ Հայաստանի ոստիկանության տվյալների, 2008-2017թթ. թրաֆիքինգի զոհերի 73.5%-ը կանայք են, եւ միայն 26.5%-ը՝ տղամարդիկ, իսկ ընդհանուր զոհերի 20.4%-ը՝ անչափահասներ:

<<Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի / դեմ պայքարի >>մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ՀՀ-ն ստորագրել է 2005թ մայիսի 16-ին և վավերացրել 2008թ ապրիլի 14-ին :

Կոնվենցիան նպատակ ունի կանխարգելելու մարդու թրաֆիքինգը և շահագործումը՝ անկախ վերջինիս դրսևորման ձևից և բնույթից , պաշտպանելու մարդու թրաֆիքինգի զոհերի իրավունքները , ապահովելու մարդկանց շահագործման փաստերի առնչությամբ հարուցված քննությունների և քրեական հետապնդումների արդյունավետությունը , ինչպես նաև խթանելու միջազգային համագործակցությունը մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ոլորտում :

Հայաստանի Հանրապետությունը սույն կոնվենցիայով ստանձնել է մի շարք պարտավորություններ , մասնավորապես `

Ա. Համակարգել և /կամ ամրապնդել ներպետական մարմինների փոխհամագործակցությունը մարդու թրաֆիքինգը և շահագործումը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու գործում , արդյունավետ միջոցների կիրառմամբ մշակել այնպիսի քաղաքականություն և ծրագրեր , որոնցում առաջնային դիրքերում կլինեն մարդու իրավունքների , ներառյալ երեխաների շահերի պաշտպանությունը , գենդերային հավասարությունը

Բ. Ձեռնարկել կամ ամրապնդել օրենսդրական , վարչական , կրթական , սոցիալական , մշակութաքյին և այլ միջոցներ , որոնք կնպաստեն մարդկանց , հատկապես կանանց և երեխաների շահագործման բոլոր ձևերի պահանջարկի վերացմանը ,

Գ. Բոլոր այդ թվում օրենսդրական միջոցներով ուժեղացնել սահմանների վերահսկողությունը ` չխախտելով անձանց ազատ տեղաշարժման առնչությամբ ստանձնած պարտավորությունները .

Դ. Թրաֆիքինգը կանխարգելող և դրա դեմ պայքարող իրավասու մարմինները համալրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով
.

գործադրելով բոլոր հնարավոր միջոցները թրաֆիքինգի զոհերին հայտնաբերելու համար , անհրաժեշտության դեպքում համագործակցելով նաև կոնվենցիայի մասնակից այլ պետությունների և համապատասխան օժանդակող կազմակերպությունների հետ , իսկ զոհին հայտնաբերելու դեպքում վերջինիս տրամադրել կացության թույլտվություն

Ե. Պաշտպանել զոհերի անձնական կյանքն ու ինքնությունը , վերջիններիս վերաբերող անձնական տվյալները պահպանել և օգտագործել <<Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակումից անձանց պաշտպանության մասին >> :

Կոնվենցիայում կարևորվում են նաև այնպիսի հարցեր , որպիսիք են զոհերի ֆիզիկական , հոգեբանական և սոցիալական վերականգնմանը նպաստող օրենսդրական կամ այլ միջոցների կիրառումը , զոհին կացության կարգավիճակ տրամադրելը , զոհերի անվճար իրավաբանական խորհրդատվություն և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը , զոհի վնասների փոխհատուցման երաշխավորումն ապահովող օրենսդրական և այլ միջոցների ձեռնարկումը :

Մարդու թրաֆիքինգի հասկացությունը նշված է թե ՀՀ ՔՕ-ում , թե Օրենքում : ՀՀ ՔՕ 132 –րդ հոդվածը նախատեսում է . << Մարդու թրաֆիքինգը ՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը , տեղափոխելը փոխանցելը , թաքցնելը կամ ստանալը , ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը ՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դրա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով առևանգման , խաբեության կամ վստահությունը չարաշահելու իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով ՝

Պատժվում է ազատազրկմամբ ՝5-ից 8 տարի ժամկետով ՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա , որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա>>:
Ըստ ԱՄՆ պետաքարտուղարության մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ զեկույցի, Հայաստանը թրաֆիքինգով զբաղվողների հետապնդման և բացահայտման ընթացքում դժվարությունների է հանդիպում Ռուսաստանի և Թուրքիայի դեպքում: Ռուսաստանում Հայաստանի քաղաքացիների աշխատանքային շահագործման դեպքերում հետաքննողները դեռևս դժվարություններ են ունենում իրավապահների հետ համագործակցության հարցում: Իսկ Թուրքիայի դեպքում իրավիճակն ավելի է բարդանում, քանի որ բացակայում են դիվանագիտական հարաբերությունները:

Նույն զեկույցի համաձայն, 2016թ. Հայաստանը թրաֆիքինգի դեմ պայքարում առաջին խմբում է: Առաջին խմբում ընդգրկված են այն երկրները, որոնց կառավարությունների գործունեությունը լիովին համապատասխանում է .

«Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության» ակտի նվազագույն պահանջներին: Հայաստանն այս ցուցանիշով իր դիրքերը բարելավել է 2013թ.՝ երկրորդ խմբից առաջին խումբ տեղափոխվելով:

Հայաստանի հետ առաջին խմբում է նաև հարևան Վրաստանը, իսկ Ադրբեջանը գտնվում է երկրորդ խմբում, ինչը նշանակում է, որ դեռևս քայլեր պետք է ձեռնարկի «Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության» ակտի նվազագույն պահանջներին համապատասխանելու համար: Ի տարբերություն Հայաստանի, որը հիմնականում թրաֆիքինգի ծագման, երբեմն էլ նպատակակետ երկիր է, Վրաստանն ու Ադրբեջանը նաեւ տարանցիկ երկրներ են:

Թրաֆիքինգից տուժածների վերականգնողական աշխատանքներով Հայաստանում զբաղվում են հիմնականում «Ամբոր Հայաստան» ու «Հույս և օգնություն» ՀԿ-ները, որոնք այդ նպատակով ստանում են պետական աջակցություն: Նրանց առաքելությունն է՝ տուժածներին ապահովել ժամանակավոր ապաստարաններով, տրամադրել ֆինանսական, իրավաբանական աջակցություն, բժշկական ու հոգեբանական վերականգնողական ծառայություններ՝ այս ճանապարհով թրաֆիքինգի զոհերին վերադարձնելով բնականոն կյանքի: 2008-2016թթ. այս ՀԿ-ներում վերականգնողական աջակցություն է ստացել 112 տուժած, որը կազմում է ընդհանուր տուժածների գրեթե 61%-ը: 2016թ. ՀՀ պետբյուջեից թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ մատուցելու համար հատկացվել է 18.8 միլիոն դրամ:

Գլուխ 3. Կոռուպցիա

3.1 Կոռուպցիայի ձևերն ու եղանակները-**Կոռուպցիան** անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է: Կոռուպցիան որպես վստահված իշխանության չարաշահում ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը ՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, **հովանավորչությունը** , պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները:

Կոռուպցիա տերմինը առաջացել է լատիներեն *«corruptus»* և *«corrumpere»* բառերից, որոնք նշանակում են փչացում, այլասերում, վարակում, ապականում, աղճատում, աղավաղում, կաշառում և այլ:

Կոռուպցիան չափելը բարդ է թե հետազոտողների և թե քաղաքականությունը ստեղծողների համար: Կոռուպցիան համարվում է աննկատելի ֆենոմեն, որը բարդ է չափել իր թաքնված բնույթի պատճառով: 1990-ականների կեսերին սկսվեց քննարկվել, թե ինչպես կարելի է չափել կոռուպցիան: Չնայած ակադեմիական մակարդակում մի շարք քննարկումների և բանավեճերի, կոռուպցիան չափելու

մեխանիզմները դեռ ամբողջական չեն։Կոռուպցիայի ընկալման համաթիվը կոռուպցիան չափելու գործիքներից է։ Կոռուպցիայի ընկալման համաթվի դեպքում ցածր է հավանականությունը գնահատելու կոնկրետ քաղաքականության արդյունավետությունը կոնկրետ երկրում[1]

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության սահմանման համաձայն՝ կոռուպցիան ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է՝ անձնական օգուտ ստանալու նպատակով։

Քլիթգարդը, ով համարվում է ակադեմիական հակակոռուպցիոն հետազոտությունների հեղինակ, առաջ է բերել կոռուպցիայի առաջացման պատճառների ֆորմուլան, որը սահմանում է՝ Կ=Մ+Հ-Հ (կոռուպցիան հավասար է մենաշնորհ+հայեցողություն-հաշվետվողականություն)։ Այս ֆորմուլան առաջինը հայտնվել է Քլիթգարդի 1988 թվականին տպագրված «Վերահսկելով կոռուպցիան» գրքում։ Կա կարծիք, որ Քլիթգարդի կոռուպցիայի ֆորմուլան շեղող ազդեցություն կարող է ունենալ, այդպիսով կարող է վտանգավոր լինել։

Ըստ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվեցիայի կոռուպցիա նշանակում է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած պարտականության պատշաճ կատարումը կամ պահանջվող վարքագիծը։

Երկրում կոռուպցիայի առկայությունը բացասական ազդեցություն է ունենում բոլոր մարդկանց վրա, դա մեծամասամբ դրսևորվում է մարդկանց իրավունքների խախտմամբ։ Կոռուպցիան ազդում է մարդկանց առողջության, ազատության, անգամ կյանքի վրա։ Այն ոչնչացնում է ժողովրդավարությունը և երկրի իշխանության հանդեպ հավատը։ Կոռուպցիան նաև նվազեցնում է ավելի առողջ շրջակա միջավայր ունենալու հավանականությունը։ Կոռուպցիան խաթարում է երկրի տնտեսական, սոցիալական և իրավական հիմքերը, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը երկրում հաստատում է բազմակողմանի և կայուն զարգացում[1]։Կոռուպցիան զարգացման վրա բացասական ազդեցություն ունի։ Այն խանգարում է տնտեսական աճին, կրճատում է սոցիալական ծառայությունները և արգելք է հանդիսանում ենթակառուցվածքներում ներդրումների համար։Կոռուպցիան ստեղծում է հակաժողովրդավարական միջավայր, որն ուղեկցվում է անվստահությամբ, այն անտեսում է բարոյական նորմերը և անհարգանք սերմանում պետական կառույցների և իշխանությունների հանդեպ։

Կոռուպցիա հասկացությունը այնքան հին է, որքան մարդկային քաղաքակրթությունը[8]։Հասկացության հիմնական իմաստը, որը համընդհանուր կերպով ընդունվում է անկախ մշակույթից կամ հասարակությունից բխում է կրոնից, որտեղ ասվում է՝ բարոյականությունը և կոռուպցիան նույն մեդալի երկու կողմերն են։Կոռուպցիայի Աբրահամյան կրոնների հայտնի օրինակ է այն, որ Ադամը ուտելով արգելված պտուղը, տուրք տվեց գայթակղությանը[9]։

Միջնադարում Մաքիավելին նույնպես անդրադարձել է կոռուպցիա երևույթին։ Մաքիավելիի խոսքերով միակ հակաթույնը կոռուպցիայի դեմ հայրենասիրությունն է,այն մեծ սերը, որը անձը ունի իր երկրի հանդեպ։ Մաքիավելին գտնում էր, որ եթե կան այնպիսի գործողություններ, որոնք կարող են թուլացնել կամ ոչնչացնել քաղաքը, ապա այդ գործողությունների առաջացման հիմնական պատճառն այն է, որ տվյալ

երկրի համապատասխան կառույցները այնքան հզոր չեն, որպեսզի մարդկանց սովորեցնեն վարքագծի կանոնները ։

3.2 Կոռուպցիան Հայաստանում- Կոռուպցիան իր տարբեր դրսևորումներով ազդում է մարդկանց կյանքի վրա, հետևաբար, հայ հասարակության բազմաթիվ հաստատությունների համար կոռուպցիայի դեմ պայքարը պետք է առաջնային լուծման խնդիր լինի: Կոռուպցիայի ընկալման, դրա մակարդակի, մատուցվող հանրային ծառայությունների որակի գնահատման և հասարակական կյանքի այլ դրսևորումների մասին տեղեկությունների կարևոր աղբյուր են ծառայում հանրային կարծիքի հետազոտությունները: Դրանք օժանդակում են կառավարությանը, քաղաքացիական հասարակությանը և մասնավոր հատվածին հակակոռուպցիոն քաղաքականության ու ծրագրերի մշակման և իրականացման գործում:

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) հովանու ներքո, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) ծրագիրը Հայաստանում անցկացրել է կոռուպցիայի վերաբերյալ հանրային և գործարարների կարծիքի ընտրանքային հետազոտություններ: Հանրային կարծիքի երկու հետազոտություններից առաջինն իրականացվել է 2008թ. աշնանը՝ Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հետ համատեղ, իսկ երկրորդը՝ 2009թ. աշնանը՝ ինքնուրույն: Երկուսն էլ անցկացվել են Հայաստանի բոլոր մարզերի չափահասների (18 և ավելի տարեկան) շրջանում: Վերջին՝ 2009թ. դեկտեմբերին և 2010թ. հունվարին անցկացված երրորդ հետազոտությամբ հարցվել են 400 մասնավոր ձեռնարկություններ ներկայացնող գործարարներ:

Հետազոտության ընթացքում հարցվածներին խնդրել են գնահատել Հայաստանում կոռուպցիայի մակարդակն ըստ ոլորտների և ծառայությունների ։ Հարցվածների կարծիքով, Հայաստանում առավել կոռումպացված են ընտրական համակարգերը և գործընթացները, դատարանները, դատախազությունը, առողջապահությունը, հարկային ծառայությունը, ոստիկանությունը և մաքսային ծառայությունը

2005 թվականին Հայաստանը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվեցիան (անգլ.՝ United Nations Convention against Corruption (UNCAC)), այն Հայաստանի ազգային ժողովը վավերացրել է 2006 թվականին։Կոնվեցիայի նպատակն է կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մեխանիզմների ուժեղացումը, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի մղումը, պատժելիության սահմանումը, պատշաճ կառավարման հաստատումը:

Հայաստանը 2003 թվականի մայիսի 15-ին ստորագրել, իսկ 2004 թվականի հունիսի 8-ին վավերացրել է Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվեցիան։ Հայաստանը 2004 թվականի փետրվարի 17-ին ստորագրել, իսկ դեկտեմբերի 8-ին վավերացրել է Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվեցիան։ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվեցիան անդրադարձ է կատարում կոռուպցիայի դեմ պայքարում ազգային մակարդակում անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկմանը, շեշտադրելով օրենսդրական այնպիսի միջոցառումների կիրառումը, որոնք տարբեր

մակարդակներում կկանխարգելեն և կբացահայտեն կոռուպցիան: Կոռուպցիայի դեմ պայքարում շեշտադրվում է նաև միջազգային համագործակցությունը: Հայաստանում

կոնվեցիան ուժի մեջ է մտել 2006 թվականի մայիսի 1-ից[19]: Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվեցիայի նպատակն այն է, որ յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրությամբ նախատեսի իրավական պաշտպանության միջոցառումներ և միջոցներ այն անձանց համար, ովքեր վնաս են կրել կոռուպցիոն գործողությունների արդյունքում: Այն միտված է մարդկանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը: Հայաստանում Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվեցիան ուժի մեջ է մտել 2005 թվականի մայիսի 1-ին[5]:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Այսպիսով փորձարարական աշխատանքից ելնելով, ինչպես նաև 9-12-րդ դասարաններում հարցումներ անցկացնելով, գտնում եմ ,որ ժամանակակից քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրները ունեն հիմնականում բացասական հետևանքներ : Եթե միգրացիայի հարցում ինչ- որ տեղ ընկալելի է ՝ գնահատելով ստեղծված իրավիճակը ,ապա թրաֆիքինգը և կոռուպցիան որևէ ձևով արդարացնել կամ դրական որակել հնարավոր չէ:

Եզրակացություն

Ժամանակակից քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների ուսունասիրությունից ելնելով հանգեցի հետևյալ եզրակացությունների .

Ա. Միգրացիայի դեպքում .

1- Հոգեբանական և մտավոր ազդեցությունները

Հասարակությունները հաշվի առնելուց առաջ անհրաժեշտ է իմանալ, թե որոնք կարող են լինել ընդհանուր հետևանքները, որոնք կարող են կիսել միգրանտները: Չնայած յուրաքանչյուր գործընթաց տարբեր է, բայց մարդիկ ստիպված են լքել իրենց հարմարավետության գոտին և գաղթել: Այդ պատճառով հոգեբանական մակարդակում միանգամայն հավանական է, որ վնաս կհասցվի: Դրանք կարող են լինել մեղմ կամ ուժեղ:

Կախված արտագաղթողի բնավորությունից ՝ գործընթացը կարող է լինել քիչ թե շատ տանջալից: Այստեղ ազդում են նաև այն պայմանները, որոնցում մարդը արտագաղթել է:Եթե դա արվել է լավ պայմաններում և միայն բարելավելու միտումով, ապա հավանական է, որ իր երկրի հեռավորությունն ու այն մարդիկ, ովքեր ապրում են դրանում, և որոնց հետ նրանք ամեն օր շփվում են:

Այնուամենայնիվ, կան սովորություններին շատ սովոր մարդիկ, ուստի նրանց համար դժվար է ընտելանալ այլ երկրի այսքան տարի անց, որը կարող է ունենալ իրենցից շատ տարբեր մշակութային շրջանակ, և եթե նրանք չցանկանան ընդունել դա, ապա հոգեկան հարթությունից խաղաղ արտագաղթ ունենալու միջոց կդառնա:

Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մարդկանց հետ կապվել աշխարհի ցանկացած կետից, ինչը նվազեցնում է մարդկանց հուզական հեռավորությունը `անկախ ֆիզիկական հեռավորությունից:

Արտագաղթը կարող է առաջացնել դեպրեսիա, տագնապ, խուճապային հարձակումներ, անհանգստություն, ուտելու խանգարումներ կամ շատ այլ հանգամանքային իրավիճակներ, որոնք միգրացիոն գործընթացի հետևանք են և ուժեղանում են, եթե այն կտրուկ է:

2- Բնակչության ծերացում և ծագման վայրում արտադրողականության բարձրացում

Ցանկացած երկիր առավելապես տուժում է, երբ տեղի է ունենում միգրացիոն գործընթաց: Ընդհանրապես, արտագաղթող բնակչությունն ամենաերիտասարդն է, քանի որ նա ամենաքիչ կապերն ունի երկրի հետ և ամենամեծ ֆիզիկական ուժն ու հուզական ուժն ունեցողը `նոր կյանք սկսելու այլ վայրում:
Սրա արդյունքում ծագման վայրում բնակչությունը տարիք է առնում:
Այնուամենայնիվ, միգրանտի ծագման երկրի համար ամեն ինչ չէ, որ բացասական է ստացվում:

Նույնիսկ եթե բնակչությունը ծերանա, արտադրողականությունը կավելանա, քանի որ արտագաղթողների թողած շատ աշխատատեղեր կմնան առանց զբաղվածության: Այսպիսով, խնդիրներ, ինչպիսիք են գործազրկությունը կամ նույնիսկ, դրանց առաջացման դեպքում, գերբնակեցումը կարող են կրճատվել:

3- ընդունող վայրի տնտեսական աճ

Չնայած այն հանգամանքին, որ ազգայնականությունը տարածված բնութագիր է մոլորակը բնակեցնող տարբեր մշակույթների շրջանում, պատմականորեն բնակչության ժամանումը այլ տարածք ապահովել է այս տարածքի տնտեսական աճը:
Ներգաղթյալները հաճախ լրացնում են այն աշխատատեղերը, որոնք տեղացիները չեն ցանկանում `թույլ տալով, որ տնտեսության հոսքը կայուն շարունակվի:

4- Հարստացում կամ մշակութային սպառնալիք ժամանման վայրում

Կախված այն տեսանկյունից, որտեղից որոշվում է գնահատել ներգաղթյալների ժամանումը, նրանց մոտ եղած մշակութային ուղեբեռը կարող է ընկալվել որպես

հարստացում սեփական մշակույթի համար կամ սպառնալիք դրան:
Այլատյացությունը, այսինքն ՝ օտարերկրացիների մերժումը տարածված է շատ հասարակություններում:
Այնուամենայնիվ, ընդունող երկրներում ընդունված է կարծել, որ տարբեր մշակույթներ ունեցող մարդիկ հարմարվում են իրենց երկրի մշակույթին: Մյուսները, ընդհակառակը, կարծում են, որ նրանք կերակրում են ընդունող երկրի իրենց մշակույթով, որպեսզի այն վերջնականապես փոփոխեն:

Այս տեսանկյունից դիտված ՝ շատերի համար դա ինտեգրման հաղթարշավն է, իսկ մյուսների համար՝ որոշվել է որպես սպառնալիք տվյալ ժողովրդի ավանդական արժեքներին և սկզբունքներին:

Համենայն դեպս, կան անհամար օրինակներ այն երկրներից, որոնք ողջունել են բնակչության շատ աննման խմբերը և հարմարվել են դրան ՝ իրենց մշակութային տարրերը ներառելով հյուրընկալողի ամենօրյա աշխատանքի մեջ:

Բ. ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՊՔՈՒՄ

1. Նկատի ունենալով մարդու թրաֆիքինգի և շահագործման էությունը , դրա առանձնահատկությունները ու յուրահատկությունները վերջինիս դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է հաջող համագործակցությամբ: Միջազգային համագործակցությունը ենթադրում է մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի միջպետական ծրագրերի համապարփակ մոտեցումների , միգրացիային առնչվող միասնական հանձնարարականների մշակում և այս ոլորտում համաձայնեցված գործողությունների իրականացում :

Միջազգային համագործակցության ոլորտում կիրառվող միջոցառումները և ծրագրերը իրենց մեջ ընդգրկում են մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի հետևյալ քայլերը

- Առևտրային նպատակներով մարմնավաճառության և շահագործվող աշխատանքի նկատմամբ պահանջարկի ձևավորման գործոնների և օրենսդրական , ռազմավարական և այլ միջոցառումների վերլուծություն :
- Կյանքում բազմազան հնարավորություններ ընձեռող ծրագրերի մշակում ՝ ընդգրկելով բազային կրթություն մասնագիտական պատրաստում և անգրագիտության վերացում հատկապես կանանց և անբարենպաստ պայմաններում գտնվող խմբերի համար
- Երեխաների կրթական հնարավորությունների ընդլայնում , դպրոց չհաճախող երեխաների թվի նվազեցում
- Պոտենցյալ միգրանտներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում , միգրացիայի վտանգների /շահագործում , պարտքեր , առողջության անվտանգության սպառնալիքներ անբուժելի սեռական հիվանդություններ /, ինչպես նաև օրինական միգրացիայի հնարավորությունների վերաբերյալ

- Իրազեկման միջոցառումների անցկացում մարդու թրաֆիքինգի վտանգների վերաբերյալ հասարակության իրազեկության ընդարձակման նպատակով:
- Մարդուն միգրացիայի անօրինական և մեծ ռիսկեր պարունակող հարկադիր աշխատանքի դրդող իրավիճակների հետազոտում և փոփոխում:
- Օրինական շահույթ բխող կամ աշխատանքային շահագործումը բացառող միգրացիայի հնարավորությունների ընդարձակման հետազոտում : Պետության կողմից աշխատանքայի միգրացիայի խրախուսումը պետք է պայմանավորված լինի միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների առկայությամբ :
- Իրավապահ և դատական մարմինների պոտոնցիալի ամրապնդում մարդու թրաֆիքինգով և շահագործմամբ զբաղվող մարդկանց ձեռբակալման և դատական հետապնդման ոլորտում
- Խոցելիության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում բոլոր մարդկանց անհրաժեշտ փաաստաթղթեր , անձնագիր ծննդյան , ամուսնության և այլ վկայականներ տրամադրելու միջոցով :

Ինչպես տեսնում ենք , մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի վերը նշված քայլերն ուղղված են երևույթի ոչ թե արտաքին դրսևորումների , այլև հիմնահարցի խորը բացահայտմանն ու դրանց վերացմանը :

Գ. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՊՔՈՒՄ

Քանի որ կոռուպցիան արատավոր երևույթ է և այն տարածված է գրեթե բոլոր երկրներում , ապա մի շարք միջազգային կազմակերպություններ կազմել են որոշ ծրագրեր կոռուպցիայի դեմ պայքարելու համար :

Կազմակերպությունների հիմնական նպատակն է հակակոռուպցիոն միջոցառումներով գլոբալ կոռուպցիայի դեմ պայքարն ու կոռուպցիոն հանցագործությունների կանխումը, նպաստել թափանցիկությանը, հաշվետվողականությանը և արժանապատվությանը բոլոր մակարդակներում և հասարակության բոլոր շերտերում:

Նրանց*տեսլականը* մի աշխարհ է, ուր կառավարությունը, բիզնեսը, քաղաքացիական հասարակությունը, քաղաքականությունը և մարդկանց առօրյա կյանքը զերծ է կոռուպցիայից:

Կ*ազմակերպության արժեքներ*ն են թափանցիկությունը, հաշվետվողականությունը, արժանապատվությունը, համերաշխությունը, խիզախությունը, արդարությունը և ժողովրդավարությունը :

Գրականության ցանկ

1. Համացանց - Վիքիպեդիա /ազատ հանրագիտարան /
2. Առուժ, Ռ. (2008): Միգրացիայի պատճառները, հետևանքները,/

   Վերականգնված է scielo.org.mx կայքից/
3. Մարդու թրաֆիքինգ և շահագործում – Ձեռնարկ ուսուցիչների համար 2013թ
4. Ձեռնարկ -Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը ՀՀ-ում. Երևան 2021թ
5. Միգրացիա – ստանդարտ ուղեցույց , միգրացիայի հետևանքները 2009թ
6. Ampop.am կայք
7. Համաշխարհային պատմության դասագիրք 12-րդ դասարան
8. Հասարակագիտության դասագիրք 12-րդ դասարան